Sourb Astvatzatzin (Holy Virgin) Church of Tzepni Village (unknown photographer, 1910s); the church with its upper part ruined (photo by J.-M. Thierry, 1968) and turned into a mosque (photo by S. Karapetian, 2008); measurement by A. Hakobian, 2008



Ծայնի գյուղի կենտրոնական մասում է գտնվում Է դարում կառուցված խաչաձև գմբեթավոր հորինվածքով Սբ. Աստվածածին եկեղեցին: Գործել է մինչև 1920 թ.: Վաղուց քանդված գմբեթի փոխարեն ունեցել է երկլանջ պարզ ծածկ: 1940-1950-ական թթ. կիսով չափ քանդել են և վերածել մզկիթի:


Построенная в VII в. крестово-купольная церковь Сурб Аствацацин (Пресв. Богородицы) находится в центре села Цпни. Действовала до 1920 г. После обрушения купола (время неизвестно) церковь перекрыли простой двускатной кровлей. В 1940-1950-х годах верхняя половина церкви была разрушена, и она была превращена в мечеть.

Sourb Astvatzatzin (Holy Virgin) Church, which was situated in the centre of Tzepni Village, represented a domed cruciform building of the 7th century. It remains obscure when its dome collapsed, being replaced by a simple gable roof.

The church functioned until 1920. Between the 1940s and 1950s, its upper part was destroyed, and it turned into a mosque.







Ալամանի Սբ. Անանիա եկեղեցին հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից (լուս.՝ Թ. Թորամանյանի (?), 1892/1893 թթ., Ն. Մառի արխիվ), եկեղեցու տեղում կառուցված բնակելի տունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.), չափ.՝ Թ. Թորամանյանի

Церковь Сурб Анания села Аламан с северо-запада, юго-запада и юго-востока (фот. Т. Тораманяна (?), 1892-1893 гг., архив Н. Марра); жилой дом, построенный на месте разрушенной церкви (фот. С. Карапетяна, 2005 г.); обмер Т. Тораманяна

St. Anania Church of Alaman Village from the north-west, south-west and south-east (photos by T. Toramanian [?], 1892/1893, N. Marr's collection); a house built in the church site (photo by S. Karapetian, 2005); measurement by T. Toramanian

Ալաման գյուղի կենտրոնական մասում էր գտնվում Է դարում կառուցված խաչաձև գմբեթավոր հորինվածքով Սբ. Անանիա եկեղեցին: Որմերին եղել են Է-ԺԱ դդ. վերաբերող շինարարական և նվիրատվական բնույթի մի շարք արձանագրություններ: Հիմնահատակ քանդել են 1940-1950-ական թթ.: Կառուցապատմամբ յուրացվել են թե՛ եկեղեցու տարածքը և թե՛ շինանյութի վերածված քարերը:


Построенная в VII в. крестово-купольная церковь Сурб Анания (Св. Анании) находилась в центре села Аламан. На ее стенах были высечены строительные и донаторские надписи VII-XI вв. В 1940-1950-х годах церковь была разрушена до основания, а территория застроена с использованием ее камней в качестве строительного материала.

St. Anania Church of Alaman used to stand in the centre of the village.

It represented a domed cruciform structure of the 7th century, its walls bearing construction and donation inscriptions of the 7th to 11th centuries.

The church was levelled to the ground between the 1940s and 1950s, its site and stones being appropriated for construction purposes.





Բագարան (այժմ՝ Քիլիթթաշը) գյուղի Աբ. Թեոդորոս եկեղեցին (625-631 թթ.) հարավից և հատվածներ (լուս.՝ Թ. Թորամանյանի, 1900-ական թթ.) 1940-50-ական թթ. հիմնահատակ ավերված եկեղեցու տեղը (քարերը գործածվել են մոտակա զորանոցի կառուցման մեջ) և եկեղեցատեղիում դեռևս պահպանվող առանձին հիմնաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2013 թ.), չափ.՝ Թ. Թորամանյանի

Церковь Сурб Теодорос (Св. Федора) (625-631 гг.) села Багаран (ныне — Килитташы) с юга и ее фрагменты (фот. Т. Тораманяна, 1900-е годы); место, где находилась церковь, разрушенная до основания в 1940-1950-х годах (камни были использованы при строительстве расположенной неподалеку казармы); сохранившиеся камни фундамента (фот. С. Карапетяна, 2013 г.); обзор Т. Тораманяна

St. Teodoros (Theodore) Church (625 to 631) of Bagaran (now: Kilittashe) Village from the south, and partial views (photos by T. Toramania, 1900s); the site of the church annihilated between the 1940s and 1950s (its stones were used in the construction of some barracks in the neighbourhood); foundation stones surviving in the church site (photos by S. Karapetian, 2013); measurement by T. Toramania



Բագարանի անանուն եկեղեցու ավերակները հարավից, հյուսիս-արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-1910-ական թթ.)
 Руины безымянной церкви Багарана с юга, северо-запада и юго-запада (автор фот. неизвестен, 1900-1910-е годы)
 The ruins of the nameless church of Bagaran from the south, north-west and south-west (unknown photographer, 1900s to 1910s)



Բագարանի անանուն եկեղեցին կառուցվել է Ժ-ԺԱ դարերում և ունեցել կենտրոնագմբեթ հորինվածք:

Տակավին 1910-ական թթ. կատարված մի քանի լուսանկարներից երևում է, որ, ըստ ամենայնի, դարեր առաջ կործանված եկեղեցուց արդեն այդ տարիներին կանգուն էր մնացել միայն հյուսիսարևմտյան անկյանը հարող հատվածը:

1940-1960-ական թթ. միջակայքում եկեղեցու մնացորդները պայթեցումով ոչնչացվել են թուրքական բանակի կողմից:

Безымянная церковь Багарана была построена в X-XI вв. и имела крестово-купольную композицию.


На фотографиях 1910-х годов видно, что церковь разрушена (точное время неизвестно), сохранялась лишь северо-западная часть стен.

В 1940-1960-х годах последние остатки церкви были взорваны турецкой армией.

The nameless church of Bagaran dated back to the period between the 10th and 11th centuries.

It represented a central-domed structure which probably tumbled down centuries before the 1910s, as the available archive photos of this period show only the north-western part of its walls as standing.

Between the 1940s and 1960s, the last remnants of the church were exploded by Turkish military forces.



Բագարանի անանուն եկեղեցու տեղը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2013 թ.), չափ.՝ Ա. Չակոբյանի, 2013 թ.

Место, где находилась безымянная церковь Багарана (фот. С. Карапетяна, 2013 г.); измерен А. Акопяна, 2013 г.

The site of the nameless church of Bagaran (photos by S. Karapetian, 2013); measurement by A. Hakobian, 2013



Բագարանի Սբ. Շուշանիկ եկեղեցին հյուսիս-արևմուտքից (ուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.), չափ.՝ Պ. Կունեոյի

Церковь Сурб Шушаник с северо-запада (автор фот. неизвестен, 1900-е годы); обмер П. Кунео

St. Shushanik Church of Bagaran from the north-west (unknown photographer, 1900s); measurement by P. Cuneo

Սբ. Շուշանիկ եկեղեցին գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղի մոտ՝ պատմական Բագարանի տարածքում՝ Ախուրյան գետի ձախափնյա ժայռաբլրին:

Հակառակ ՀՀ տարածքում գտնվելու իրողության՝ չի ազատվել հասանելի ամեն հայկականը ոչնչացնելու մոլուցքով համակված թուրքական կողմի վանդալական ոտնձգություններից և նրանց կողմից տեսանելի արևմտահայաց ճակատին կրում է տարբեր տրամաչափի հրազենային գնդակների հարյուրավոր հետքեր:

Церковь Сурб Шушаник (Св. Шушаник) находится на скалистом холме на левом берегу реки Ахурян, на территории исторического Багарана, рядом с приграничным селом Ервандашат Армавирской области РА.

Несмотря на то, что церковь находится на территории РА, она также пострадала от действий турок, стремящихся уничтожить все армянское: на западной стене, обращенной в их сторону, видны многочисленные следы от разнокалиберных пуль.

St. Shushanik Church stands on a rocky hill on the left bank of the river Akhurian, in the territory of Bagaran, one of the historical capitals of Armenia, near Yervandashat Village of Armavir Region, Republic of Armenia. Despite its location, it has not escaped the barbaric acts of Turkish vandals: its western facade, which overlooks the Turkish side of the Armeno-Turkish border, bears hundreds of marks left by bullets of varying calibre.







Բազարանի Սբ. Շուշանիկ եկեղեցու արևմտյան (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ. և Գ. Բազեի, 2008 թ.) և արևելյան ճակատները (լուս.՝ Գ. Բազեի, 2008 թ.)

Церковь Сурб Шушаник: западный (фот. С. Карапетяна, 2007 г., и Грайра Базе, 2008 г.) и восточный фасады (фот. Грайра Базе, 2008 г.)

The western (photos by S. Karapetian, 2007, and Hrair Baze, 2008) and eastern facades of St. Shushanik Church (photo by Hrair Baze, 2008)




Արջո-Առիճի վանքի հատակագիծն ըստ պահպանված մնացորդների չափագրության և նկարագրական տվյալներ պարունակող գրավոր հիշատակությունների (հեղ.՝ Ա. Հակոբյան, 2014 թ.), վանքի մոտավոր ուրվանկարը (հեղ.՝ Ս. Այվազյան, 2015 թ.)
 Վանքի մնացորդները (ֆուտ.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

План монастыря Арджо-Арич, составленный по обмеру сохранившихся остатков и описаний в письменных источниках (автор А. Акопян, 2014 г.); рисунок монастыря (автор С. Айвазян, 2015 г.)
 Остатки монастыря (фот. С. Карапетяна, 2014 г.)

The plan of Arjo-Arij Monastery according to the measurement of its remnants and its description in various records (by A. Hakobian, 2014); an outline of the monastery by S. Ayvazian (2015)
 The remnants of the monastery (photos by S. Karapetian, 2014)







Նախիջևան գյուղի Սբ. Ստեփանոս եկեղեցին (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.), եկեղեցու մնացորդներն ու գյուղական դպրոցի որմերում որպես շինանյութ գործածված սրբատաշ քարերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.), չափ.՝ Ա. Հակոբյանի, 2011 թ.

Церковь Сурб Степанос (автор фот. неизвестен, 1900-е годы); остатки церкви; сельская школа, при строительстве которой были использованы чисто отесанные облицовочные камни церкви (фот. С. Карапетяна, 2011 г.); обмер А. Акопяна, 2011 г.

St. Stepanos (Stephen) Church of Nakhijevan Village (unknown photographer, 1900s); its remnants and the village school, the walls of which were laid with the finely-dressed stones of the church (photos by S. Karapetian, 2011); measurement by A. Hakobian, 2011

Սբ. Ստեփանոս եկեղեցու մնացորդները գտնվում են Նախիջևան գավառակի համանուն վարչական կենտրոնում:

Կառուցվել է Է դարում և ունեցել գմբեթավոր հորինվածք: Արդեն 1840-ական թթ. եկեղեցու գմբեթը քանդված էր: ԺԹ դարավերջին վերակառուցվել է, որի ժամանակ հին տաճարից մասնակի պահպանվել է միայն հյուսիսային ճակատը:

2011 թ. տեղում առկա էին կմախքացած կրաշաղախի մնացորդները:

Остатки церкви Сурб Степанос (Св. Стефана) находятся в селе Нахиджеван — административном центре одноименного участка.

Построенная в VII в. церковь в 1840-х годах уже не имела купола. В конце XIX в. она была перестроена. От старой церкви частично сохранилась лишь северная стена.

По состоянию на 2011 г. от церкви сохранялись лишь остатки бутобетонных массивов стен.

The remnants of St. Stepanos (Stephen) Church are situated in Nakhijevan, the administrative centre of the sub-district of the same name.

It represented a 7th-century structure with a dome which had already tumbled down as of the 1840s. In the late 19th century, the church underwent thorough reconstruction (only its northern facade was partly preserved).

As of 2011, only some meagre remnants of mortar backfill were preserved in the site.



Մրենի Կաթողիկեն հարավ-արևմուտքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.), հարավարևմտյան անկյանը հարող քանդված հատվածը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 թ.) և արդեն գրեթե ամբողջությամբ կործանված հարավային ճակատը (լուս.՝ Գ. Արզումանյանի, 2009 թ.)

Мренский собор с юго-запада (автор фот. неизвестен, 1900-е годы); обрушившаяся юго-западная часть стены (фот. С. Карапетяна, 2000 г.); почти полностью обрушившаяся южная стена (фот. Г. Арзуманяна, 2009 г.)

Mren Cathedral from the south-west (unknown photographer, 1900s); the ruined south-western part of its wall (photo by S. Karapetian, 2000); the southern facade of the cathedral almost entirely levelled to the ground (photo by G. Arzumanyan, 2009)

Տաճարը գտնվում է պատմական Բագարանից (այժմ՝ Քիլիթթաշը գյուղ) 3 կմ հյուսիս՝ Մրեն քաղաքատեղիում:

Կառուցվել է 639-640 թթ. իշխան Դավիթ Սահառունու նախաձեռնությամբ: 29,30 x 20 մ արտաքին չափերով, կղմինդրաձածկերի ներքո ութանիստ զմբերով և համակ սրբատաշ քարով իրականացված կառույց է: Ունի Է-ԺԳ դարերի բազմաթիվ արձանագրություններ: Ոչ միայն տևական անխնամ վիճակի, այլև միտումնավոր վնասարարությունների հետևանքով 2007 թ. գրեթե ամբողջությամբ փլուզվել է հարավային ճակատը: Նույն վտանգի առջև են նաև արևմտյան և հյուսիսային ճակատները, քանի որ դրանց հիմքերը նույնպես միտումնավոր քանդված են:


Мренский собор находится на территории одноименного городища в 3 км к северу от исторического Багарана (ныне — Килитташы). Построенный в 639-640 гг. князем Давидом Сахаруни собор (внешние размеры — 29,30 x 20 м) имеет восьмигранный купол, венчающийся шатром, который покрыт черепицей. Все стены выложены из чисто отесанного камня и имеют надписи VII-XIII вв. Долгое время собор находился в заброшенном состоянии и подвергался умышленным разрушениям, вследствие чего в 2007 г. почти полностью обрушилась южная стена. Западная и северная стены также находятся под угрозой обрушения, так как их основания умышленно разрушены.

The cathedral of Mren is situated in the city site of the same name, 3 km north of Bagaran, one of the historical capitals of Armenia (now: Kilittashe Village).

Built between 639 and 640 by Prince Davit Saharuny, it represents a monument of entirely finely-dressed revetment (exterior dimensions: 29.30 x 20 metres), a tiled roof and an octahedral dome. Its walls abound in inscriptions of the 7th to 13th centuries.

In the aftermath of total neglect and premeditated damage, in 2007 the southern facade of the cathedral almost entirely tumbled down. Its western and northern facades can share this fate any day as their foundations have been seriously undermined.







Մրենի Կաթողիկեն հարավ-արևելքից (լուս.՝ անհայտ հեղ., 1910-ական թթ. և Պ. Տոնապետյանի, 2014 թ.), չափ.՝ Թ. Թորամանյանի, հարավային ճակատին ազուցված խաչքարերը նրա կործանումից առաջ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 թ.) և հետո (լուս.՝ Գ. Արզումանյանի, 2009 թ.)

Мренский собор с юго-востока (автор фот. неизвестен, 1910-е годы, и фот. П. Тонапетяна, 2014 г.); обмер Т. Тораманяна; фрагмент южной стены с хачкарами до (фот. С. Карапетяна, 2000 г.) и после обрушения (фот. Г. Арзуманяна, 2009 г.)

Mren Cathedral from the south-east (unknown photographer, 1910s, and P. Tonapetian, 2014); measurement by T. Toramanian; the cross-stones of the southern facade of the cathedral before (photo by S. Karapetian, 2000) and after its collapse (photo by G. Arzumanyan, 2009)





Բագնայրի վանքի կենտրոնական հուշարձանախումբը հյուսիս-արևելքից (լուս.՝ Դ. Երմակովի, 1890-ական թթ. և Թ. Թորամանյանի, 1912 թ.)

Վանքի ավերակները հյուսիս-արևելքից և հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2010 թ.), չափ.՝ Թ. Թորամանյանի, մաքրագծումը՝ Ա. Հակոբյանի

Центральный ансамбль монастыря Багнайна с северо-востока (фот. Д. Ермакова, 1890-е годы, и Т. Тораманяна, 1912 г.)

Руины монастыря с северо-востока и севера (фот. С. Карапетяна, 2010 г.); обмер Т. Тораманяна, подготовил к изданию А. Акопян

The central monuments of Bagnayr Monastery from the north-east (photos by D. Yermakov, 1890s, and T. Toramania, 1912); the ruins of the monastery from the north-east and north (photos by S. Karapetian, 2010); measurement by T. Toramania, prepared for publication by A. Hakobian

Վանքի ավերակները գտնվում են Բագնայր (այժմ՝ Գոզլուջա) գյուղում: Ժ-ԺԳ դարերի ընթացքում ձևավորված վանական համալիր է: 1920-ական թթ.-ից ի վեր ենթարկվում է շարունակական ավերումների:

Руины монастыря Багнайна (X-XIII вв.) находятся в одноименном селе (ныне — Козлуджа). Начиная с 1920-х годов, монастырь постепенно разрушался.

The ruins of the monastic complex of Bagnayr (10th to 13th centuries) are situated in the village of the same name (at present renamed Ghozluja).

Since the 1920s, it has suffered continual destruction.



Բագնայրի վանքի կենտրոնական հուշարձանախմբի գլխավոր կառույցները՝ Սբ. Գրիգոր և Սբ. Աստվածածին մայր եկեղեցիները, արևելքից (մեջտեղի եկեղեցու անունն անհայտ է) և հարավ-արևմուտքից (լուս.՝ Թ. Թորամանյանի, 1912 թ.)

Главные постройки центрального ансамбля монастыря Багнайра — церкви Сурб Григор (Св. Григория) и Сурб Аствацацин (Пресв. Богородицы) с востока (название церкви между ними неизвестно) и юго-запада (фот. Т. Тораманяна, 1912 г.)

The main churches of the central monument cluster of Bagnayr Monastery, St. Grigor (Gregory) and Sourb Astvatzatin (Holy Virgin), from the east (the name of the church in the middle is unknown) and south-west (photos by T. Toramanian, 1912)



Բազմալի վանական համալիրի հիմնական մասը ոչնչացվել է թուրքական բանակի կողմից (կանգուն է միայն հիմնական հուշարձանախմբից փոքր-ինչ հյուսիս մեկուսի կանգնած Սբ. Երրորդություն եկեղեցին): Այստեղ ևս պայթյուններով կործանված կառույցների սրբատաշ քարերը հեռացվել և յուրացվել են որպես շինանյութ, իսկ անկարևոր նկատված ավերակների մնացորդներն էլ՝ անհետացվել տեղաբնակ քրդերի ձեռքով:

Основная часть монастыря Багнайра была уничтожена турецкой армией. Ее чисто отесанные облицовочные камни расхищены и использованы в качестве стройматериала, а остатки построек присвоены местными курдами. Сохранилась лишь церковь Сурб Еррордютюн (Св. Троицы), которая стоит обособленно, немного к северу от основных построек.

The monastic complex of Bagnayr has been mostly exploded by Turkish military forces, its finely-dressed stones being used as building material (the local Kurds have appropriated even the last remnants of its ruins). The only standing monument of the monastery is the church of Sourb Yerordutiun (Holy Trinity) located a little north of its central buildings.



Բազմալի վանքի կենտրոնական հուշարձանախմբի մնացորդներն արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Գ. Առաքելյանի և Ս. Կարապետյանի, 2010 թ.)

Остатки центрального ансамбля монастыря Багнайра с востока и юго-запада (фот. Г. Аракелян и С. Карапетына, 2010 г.)

The remnants of the central monuments of Bagnayr Monastery from the east and south-west (photos by G. Arakelian and S. Karapetian, 2010)





Բազմալրի վանքի կենտրոնական հուշարձանա-
խմբի Աբ. Գրիգոր եկեղեցին հարավ-արևմուտքից
(լուս.՝ Թ. Թորամանյանի, 1912 թ.)

Церковь Сурб Григор (Св. Григория) — од-
на из церквей центрального ансамбля мо-
настыря Багнайра, с юго-запада (фот. Т. То-
раманяна, 1912 г.)

One of the central monuments of Bagnayr
Monastery, St. Grigor (Gregory), from the
south-west (photo by T. Toramanyan, 1912)



Նույն եկեղեցու խորանի հյուսիսակողմյան հատ-
վածի մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի,
2010 թ.)

Остатки северной стены алтарной апсиды
той же церкви (фот. С. Карапетяна, 2010 г.)

The remnants of the northern part of the church
sanctuary (photos by S. Karapetian, 2010)

Խծկոնքի վանքը գտնվում է Կարսի մարզի Տեկոր (այժմ՝ Դիգոր) և Ագրակ (այժմ՝ Դերինյոզ) գյուղերի միջև՝ Տեկոր վտակի ձախ ձորապոնկիին: Վանական համալիրը ձևավորվել է Է-ԺԱ դարերի ընթացքում: Բաղկացած էր 5 եկեղեցիներից՝ Սբ. Կարապետ, Սբ. Սարգիս, Սբ. Աստվածածին, Սբ. Ստեփանոս և Սբ. Լուսավորիչ, որմնափակ խաչքարերից, ինչպես նաև բնակելի և տնտեսական նշանակության մի շարք այլ կառույցներից:

1211 թ. Ջաքարյան իշխաններն ազատագրում են վանքը և արդեն 1213 թ. իրականացնում վերանորոգման աշխատանքներ:

1767 թ. իշխվում է Սիմեոն կաթողիկոսի ձեռնարկած բարենորոգումների առնչությամբ, սակայն ավելի ուշ հայտնվում է օսմանյան կառավարության հովանավորությամբ գործող Ալաջայի քրդերի տիրապետության ներքո, որոնք համալիրի շինությունները գործածում են իբրև գոմ:

Կացությունը փոխվում է 1878 թվականից հետո, երբ գեներալ Հ. Լազարյանի պատվերով վանքում հաստատվում է Հարություն վարդապետը և ձեռնամուխ լինում համալիրի վերանորոգությանը. «...շենացրել է մենաստանը, շինել է ջրաղաց, ուխտատուների համար սենեակներ, տնկել է անտառ, միայն իր նախածեռնութեամբ...»:

Վանքի զանազան կառույցների որմերին եղել են (մի քանիսը դեռևս պահպանվում են Սբ. Սարգիս եկեղեցու որմերին) 1005, 1006, 1033, 1034, 1153, 1156, 1208, 1211, 1213, 1214, 1216, 1221, 1222, 1230, 1231, 1233, 1239, 1240 թվակիր և ԺԱ-ԺԳ դարերին վերաբերող առավելապես նվիրատվական բնույթի բազմաթիվ անթվակիր արձանագրություններ:

1920 թ.-ից Կարսի մարզի նվաճումով վանքը հայտնվում է Թուրքիայի կազմում և քառորդ դար անց պայթեցվում թուրքական բանակի կողմից: Համատարած ավերվում են նաև հուշարձանախմբի բոլոր մնացած կառույցները: Պետական ծրագրով և խնամքով կոծկված վանդալական գործողություններից միայն տարիներ անց վանքի եղերական կացության մասին առաջինն ահազանգում է Ժ-Մ. Թիերրին 1959 թ.:

Օրհասական վիճակում, սակայն, հրաշքով ցարդ կանգուն է մնում համալիրի միայն մեկ՝ Սբ. Սարգիս եկեղեցին:

Монастырь Хцконка (VII-XI вв.) находится между селами Текор (ныне — Дигор) и Аграк (ныне — Деринёз), на краю левого ущелья притока Текор. Он состоял из пяти церквей — Сурб Карапет (Св. Иоанна Предтечи), Сурб Саркис (Св. Саркиса), Сурб Аствацацин (Пресв. Богородицы), Сурб Степанос (Св. Стефана) и Сурб Лусаворич (Св. Григория Провсвятителя), а также вмонтированных в архитектурную форму хачкаров, жилых и хозяйственных построек.

В 1211 г. князья Закарян (Захариды) освободили от турок-сельджуков монастырь Хцконка, который в 1213 г. был реставрирован.

В 1767 г. монастырь упоминается в связи с реформами католикоса Симеона. Позднее им завладели курды из племени Аладжа, пользовавшиеся поддержкой османских властей, и превратили монастырские сооружения в хлевы.

Ситуация изменилась после 1878 г., когда при посредничестве генерала Ов. Лазаряна в монастыре обосновался архимандрит Арутюн. Последний «...по своей инициативе обновил монастырь, построил водяную мельницу, комнаты для паломников, посадил деревья...».

После 1920 г. монастырь оказался на территории Турции, а в 1940-1950-х годах турецкая армия взорвала его. В течение десятилетий при попустительстве турецких властей и в строгой секретности были разрушены все монастырские сооружения. Впервые о плачевном состоянии монастыря забил тревогу Ж.-М. Тьерри в 1959 г. Из монастырских сооружений как-то чудом уцелела лишь церковь Сурб Саркис, которая ныне находится в аварийном состоянии.

На монастырских сооружениях были высечены надписи 1005 г., 1006 г., 1033 г., 1034 г., 1153 г., 1156 г., 1208 г., 1211 г., 1213 г., 1214 г., 1216 г., 1221 г., 1222 г., 1230 г., 1231 г., 1233 г., 1239 г., 1240 г., а также множество донаторских надписей X-XIII вв. Несколько надписей сохранилось также на стенах церкви Сурб Саркис.

The ruins of Khetzkonk Monastery are situated on the edge of a gorge lying on the left bank of the tributary Tekor, in an area between Tekor (now: Digor) and Agrak (now: Derinyoz) Villages. A monument of the 7th to 11th centuries, it consisted of 5 churches, Sourb Karapet (Holy Forerunner), St. Sargis, Sourb Astvatzatzin (Holy Virgin), St. Stepanos (Stephen), and Sourb Lusavorich (Holy Enlightener), as well as several set-in-wall cross-stones and a number of annexes.

In 1211 the princes Zakarian liberated the monastery from Seljuk Turks and carried out some overhaul there in 1213.

In 1767 Catholicos Simeon implemented renovation in Khetzkonk, but later it was occupied by the Kurds of Alaja (they enjoyed the auspices of the Ottoman Government) who started using the monastic buildings as cattle-sheds.

This situation changed after 1878, when Archimandrite Harutiun established himself in the monastery with the mediation of General H. Lazarian and embarked on its renovation:

He has led the monastery to prosperity having built a mill and rooms for pilgrims. He has also planted trees, doing all this only on his own initiative.

The monastery abounded in inscriptions some of which traced back to 1005, 1006, 1033, 1034, 1153, 1156, 1208, 1211, 1213, 1214, 1216, 1221, 1222, 1230, 1231, 1233, 1239, and 1240. It also had numerous undated donation inscriptions of the period between the 11th and 13th centuries.

With the occupation of the region of Kars in 1920, Khetzkonk shifted into the possession of Turkey. Between the 1940s and 1950s, the monastic churches were exploded by Turkish military forces, all the other buildings suffering serious destruction. It was only in 1959, years after this vandalism, that J.-M. Thierry was able to visit the monastery and document its tragic state.

At present only St. Sargis Church is still preserved standing, although in a bad state of emergency (it retains some of its inscriptions).



Խժկոնքի վանքը հարավ-արևելքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.)
Монастырь Хцконка с юго-востока (автор фот. неизвестен, 1900-е годы)
Khetzkonk Monastery from the south-east (unknown photographer, 1900s)



Խժկոնքի վանքը հարավ-արևելքից և արևելքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.)

Монастырь Хцконка с юго-востока и востока (автор фот. неизвестен, 1900-е годы)

Khetchkonk Monastery from the south-east and east (unknown photographer, 1900s)



Խժկոնքի վանքը հարավ-արևելքից և արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 և 2011 թթ.)
Монастырь Хцконка с юго-востока и востока (фот. С. Карапетяна, 2000 г. и 2011 г.)
Khetzkonk Monastery from the south-east and east (photos by S. Karapetian, 2000 and 2011)



Խճկոնքի վանքի Սբ. Սարգիս եկեղեցին հյուսիսից 1910-ական (լուս. հեղ.՝ անհայտ) և 2011 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)
Церковь Сурб Саркис монастыря Хцконка с севера (автор фот. неизвестен, 1910-е годы, и фот. С. Карапетяна, 2011 г.)
St. Sargis Church of Khetzkonk Monastery from the north in the 1910s (unknown photographer) and in 2011 (photo by S. Karapetian)







Խծկոնքի վանքի Սր. Կարապետ եկեղեցին հյուսիս-արևմուտքից և արևելքից, հատվածներ եկեղեցուց (լուս. հեղ.՝ անհայտ, 1910-ական թթ.) և շինության մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)



Церковь Сурб Карапет монастыря Хцконка с северо-запада, востока и ее фрагменты (автор фот. неизвестен, 1910-е годы); остатки церкви (фот. С. Карапетяна, 2011 г.)

Sourb Karapet (Holy Forerunner) Church of Khetzkonk Monastery from the north-west and east; partial views of the church (unknown photographer, 1910s) and its remnants (photos by S. Karapetian, 2011)

Սր. Կարապետ եկեղեցին Խծկոնքի վանքի հնագույն շինությունն է: Ըստ հորինվածքային և հարդարանքի տարրերի առանձնահատկությունների՝ կարելի է թվագրել է դարով (հետազոտողներից ոմանք կառուցման հավանական ժամանակը համարում են Թ-Ժ դարերը): Որմերին նկատվել են 1005-1006 թթ. արձանագրություններ:

Ունեցել է քառախորան կենտրոնագմբեթ հորինվածք, թույլ արտահայտված հովհարաձև վեղարի ներքո՝ ութանիստ թմբուկ:

1940-1950-ական թթ. եկեղեցին պայթեցվել է: 2011 թ. մինչև 3 մ բարձրությամբ կանգուն էր մնացել Սր. Կարապետ եկեղեցու արևելյան պատից մի աննշան հատված:

Церковь Сурб Карапет — самое раннее сооружение монастыря Хцконка. Исходя из композиционных особенностей и убранства, датировалась VII в. (некоторые исследователи датировали ее IX-X вв.). На стенах были надписи 1005-1006 гг.

Церковь принадлежала к типу купольного тетраконха с восьмигранным куполом, венчающимся зонтичным шатром.

В 1940-1950-х годах она была взорвана. По состоянию на 2011 г. сохранилась незначительная часть восточной стены (до высоты 3-х м).

The oldest of the monuments of Khetzkonk, Sourb Karapet (Holy Forerunner) Church, can be traced back to the 7th century according to its composition and ornamentation features (some researchers attribute it to the 9th to 10th centuries). Its walls were engraved with inscriptions of 1005 and 1006.

Sourb Karapet represented a central-domed tetraconch with an octahedral tambour beneath a slightly fan-shaped spire.

It was blown up between the 1940s and 1950s. As of 2011, only a very small section of its eastern wall still survived to a height of 3 metres.





Խծկոնքի վանքի Սբ. Աստվածածին եկեղեցին արևելքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1910-ական թթ.) և եկեղեցու մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)

Церковь Сурб Аствацацин монастыря Хцконка с востока (автор фот. неизвестен, 1910-е годы); остатки церкви (фот. С. Карапетяна, 2011 г.)

Sourb Astvatzatzin (Holy Virgin) Church of Khetzkonk Monastery from the east (unknown photographer, 1910s); the church remnants (photo by S. Karapetian, 2011)

Խծկոնքի Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում էր վանական համալիրի արևմտյան խմբի հարավային եզրին: Հյուսիսային կողմից գրեթե կից էր Սբ. Կարապետ եկեղեցուն:

Կառույցի թվագրումը հիմնվում է սուկ հորինվածքային և ճարտարապետական առանձնահատկությունների քննության վրա, որն է՝ ԺԱ դարը:

Սբ. Աստվածածին եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հորինվածքով կառույց էր, որին արևմուտքից կցված էր արդեն ԺԹ դարի կեսին ավերված գավիթը:

Նախքան 1940-1950-ական թթ. պայթեցումով ոչնչացնելը որմերին եղած վիճակների մեջ կասկածելի վերծանությանը վկայվել է մեկը՝ 1021 թ., իսկ գրեթե անսխալ՝ միևնույն՝ 1213 թ. ևս երկու վիճագիր: Դրանցից մեկը, որ 12 տողով զետեղված է եղել արևելյան ճակատին, վերաբերում էր եկեղեցու բարեգարդմանը:

Церковь Сурб Аствацацин находилась в южной части монастыря Хцконка и с северной стороны почти примыкала к церкви Сурб Карапет.

Исходя из композиционных и архитектурных особенностей, датировалась XI в. Одна из надписей была высечена в 1021 г. (правильное прочтение вызывает сомнение), а две другие — в 1213 г. Одна из них (12-строчная) находилась на восточной стене и относилась к обновлению церкви.

Церковь Сурб Аствацацин была вписанным в прямоугольную форму крестово-купольным сооружением с притвором, примыкающим к ней с западной стороны. В середине XIX в. притвор лежал в руинах.

В 1940-1950-х годах церковь была взорвана, а ее чисто отесанные облицовочные камни разобраны и увезены.

Sourb Astvatzatzin (Holy Virgin) Church of Khetzkonk used to stand at the southern edge of the western monument cluster of the monastery. To the north, it almost adjoined Sourb Karapet.

The church is traced back to the 11th century only on the basis of its composition and architectural features as there are no other records to provide any information with this regard.

One of the lapidary inscriptions of the church was dated 1021 although its decipherment does not seem trustworthy enough. It also had another two inscriptions from 1213 (deciphered almost without mistakes) one of which (12 lines) was carved on its eastern facade and commemorated an act of renovation.

Sourb Astvatzatzin represented a structure rectangular outwardly and cruciform inwardly. To the west, it was adjoined by a narthex which was in ruins as of the mid-19th century.

The church was exploded between the 1940s and 1950s.





Խծկոնքի վանքի Սր. Ստեփանոս եկեղեցին հարավ-արևմուտքից և արևմուտքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1910-ական թթ.), եկեղեցու մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)

Церковь Сурб Степанос монастыря Хцконка с юго-запада и запада (автор фот. неизвестен, 1910-е годы); остатки церкви (фот. С. Карапетяна, 2011 г.)

St. Stepanos (Stephen) Church of Khetzkonk Monastery from the south-west and west (unknown photographer, 1910s); the church remnants (photo by S. Karapetian, 2011)

Խծկոնքի Սր. Ստեփանոս եկեղեցին մեկուսի կանգնած է եղել Սր. Կարապետ, Սր. Սարգիս և Սր. Աստվածածին եկեղեցիներից փոքր-ինչ արևելք:

Համակ սրբատաշ կարմրածիրանագույն տուֆով կառուցված եկեղեցին հորինվածքային առանձնահատկություններով հար և մնան էր համալիրի Սր. Աստվածածին և Սր. Գրիգոր եկեղեցիներին և նույնպես թվագրվում է ԺԱ դարով:

Եկեղեցու շուրջ հիմնականում ամփոփված են եղել 1208/9 թ. Կեչրորի ճակատամարտում զոհված նահատակները, որոնց գերեզմաններին կանգնեցված խաչքարերի մեծ մասն արդեն 1878 թ. դրությամբ ոչնչացված էր:

Եկեղեցին պայթեցումով կործանել են 1940-1950-ական թթ., իսկ ոչնչացումից հետո երեսապատի սրբատաշ քարերը՝ իսպառ հեռացրել հնավայրից:

Церковь Сурб Степанос монастыря Хцконка стояла обособленно к востоку от церквей Сурб Карапет, Сурб Саркис и Сурб Аствацацин.

Церковь (XI в.) была построена из чисто отесанного красноватого туфа и повторяла композиционные особенности церквей Сурб Аствацацин и Сурб Григор.

Вокруг церкви находились захоронения воинов, павших в битве при Кечроре в 1208/09 г. Большая часть хачкаров, поставленных на их могилах, по состоянию на 1878 г. была уничтожена.

Церковь была взорвана в 1940-1950-х годах, а ее чисто отесанные облицовочные камни разобраны и увезены.

St. Stepanos (Stephen) Church (11th century) of Khetzkonk used to stand isolated from the other monastic buildings, slightly east of Sourb Karapet (Holy Forerunner), St. Sargis and Sourb Astvatzatzin (Holy Virgin).

Built of finely-dressed reddish-apricot tuff, it thoroughly shared the composition features of Sourb Astvatzatzin and St. Grigor.

A cemetery of cross-stones extending around the church retained the remains of those killed at the battle of Kechror in 1208/9. As of 1878, most of these khachkars were already annihilated.

St. Stepanos was blown up between the 1940s and 1950s, its finely-finished revetment stones being carried away from the site.



Խծկոնքի վանքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հյուսիս-արևմուտքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1910-ական թթ.) և եկեղեցու մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.), չափ.՝ Ա. Հակոբյանի, 2011 թ.

Церковь Сурб Григор Лусаворич монастыря Хцконка с северо-запада (автор фот. неизвестен, 1910-е годы); остатки церкви (фот. С. Карапетяна, 2011 г.); обмер А. Акопяна, 2011 г.

St. Grigor Lusavorich (Gregory the Enlightener) Church of Khetzkonk Monastery from the north-west (unknown photographer, 1910s); the church remnants (photo by S. Karapetian, 2011); measurement by A. Hakobian, 2011

Սբ. Լուսավորիչը Խծկոնքի վանական համալիրի ծայրարևելյան եզրին մեկուսի կանգնած եկեղեցին էր:

Կառուցվել է ԺԱ դարի սկզբներին: Որմերին ունեցել է 1021, 1028, 1034 թթ. վիճազեր:

Եկեղեցու հյուսիսարևելյան անկյանը մոտ՝ բարձր պատվանդանին, եղել է որմնափակ խաչքար:

Ոչնչացվել է համալիրի մյուս եկեղեցիների հետ 1940-1950-ական թթ.: Կործանված եկեղեցու երեսապատի սրբատաշ քարերը գրեթե խափառ հեռացվել են հնավայրից:

Церковь Сурб Григор Лусаворич стояла обособленно в восточной части монастыря Хцконка.

Она была построена в начале XI в. На стенах были надписи 1021 г., 1028 г., 1034 г.

У юго-восточного угла церкви на высоком постаменте стоял вмонтированный в архитектурную форму хачкар.

Церковь была взорвана в 1940-1950-х годах, а ее чисто отесанные облицовочные камни разобраны и увезены.

Sourb Lusavorich (Holy Enlightener) was a lonely church standing at the easternmost edge of the monastic complex of Khetzkonk.

A monument of the early 11th century, it had inscriptions dated 1021, 1028 and 1034.

A tall pedestal rising near the north-eastern corner of the church was surmounted by a set-in-wall cross-stone.

Sourb Lusavorich was exploded together with the other churches of the monastery between the 1940s and 1950s. The finely-finished stones of its revetment were moved away from the site and appropriated.







ՄԱՍՆԱԿԻ ԿԱՄ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՈՉՆՉԱՅՎԱԾ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
**ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՍ ԳԱՎԱՌԻ
ԿԱՐՍ ԳԱՎԱՌԱԿՈՒՄ**

ПОЛУРАЗРУШЕННЫЕ ИЛИ ПОЛНОСТЬЮ УНИЧТОЖЕННЫЕ
АРМЯНСКИЕ ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ
**НА ТЕРРИТОРИИ УЧАСТКА КАРС,
ОКРУГ КАРС, КАРССКАЯ ОБЛАСТЬ**

SEMI-RUINED OR TOTALLY ANNIHILATED
HISTORICAL ARMENIAN MONUMENTS IN
**KARS SUB-DISTRICT,
KARS DISTRICT, KARS REGION**







Վարսի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ժ.-Մ. Թիերրիի, 1959 թ.) և եկեղեցատեղին նրա հիմնահատակ ավերումից հետո (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1960-ական թթ. վերջ)

Церковь Сурб Григор Лусаворич города Карс с юго-запада (фот. Ж.-М. Тьерри, 1959 г.); груда обломков разрушенной до основания церкви (фот. А. Ахназаряна, конец 1960-х годов)

St. Grigor Lusavorich (Gregory the Enlightener) Church of Kars from the south-west (photos by J.-M. Thierry, 1959); a heap of fragments from the annihilated church (photos by A. Hakhnazarian, late 1960s)

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցելու թույլտվությունը ստանալու համար դիմումներն իշխանություններին սկսվել էին դեռևս 1901 թ.: Շինարարական աշխատանքներն ամբողջացել են 1912-1914 թթ. ընթացքում, իսկ օծումը կատարվել է 1915 թ. ապրիլին:

Թուրքական իշխանությունները հիմնահատակ քանդել են 1960-ական թթ. սկզբներին (հրաշքով փրկվել են միայն եկեղեցու՝ Գայանե Փինաչյանցի միջոցներով պատրաստված դռները):

Церковь Сурб Григор Лусаворич (Св. Григория Просветителя) города Карс была построена в 1912-1914 гг. и освящена в апреле 1915 г. Примечательно, что армяне города обращались к властям с просьбой разрешить строительство церкви, начиная с 1901 г.


В начале 1960-х годов церковь была полностью разрушена турецкими властями. Чудом были спасены лишь двери, сделанные на средства Гаяне Пиначянц.

St. Grigor Lusavorich (Gregory the Enlightener) Church of Kars was built between 1912 and 1914 (petitions for permission to start its construction had been submitted to the authorities as early as 1901), its consecration being held in April 1915.

The Turkish powers levelled the church to the ground in the early 1960s: only its doors, made through Gayane Pinachiant's means, escaped destruction.









Կարսի Աբ. Գրիգոր Լուսավորիչ Էկեղեցու արևմտյան մուտքի երկփեղկ դուռը (լուս.՝ Ժ.-Մ. Թիերրիի, 1959 թ.), արևմտյան և հարավային դռները խաչաքանդակները մասամբ ոչնչացնելուց հետո Կարսի պատմության թանգարանում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2013 թ.)

Двухстворчатая дверь западного входа церкви Сурб Григор Лусаворич города Карс (фот. Ж.-М. Тьерри, 1959 г.); западная и южная двери церкви в Историческом музее Карса: рукава резных крестов умышленно соскоблены (фот. С. Карапетяна, 2013 г.)

The double door of the western entrance of St. Grigor Lusavorich (Gregory the Enlightener) Church of Kars (photo by J.-M. Thierry, 1959); the western and southern doors of the church with scraped cross wings: kept in the History Museum of Kars (photos by S. Karapetian, 2013)



Կարսի Սբ. Առաքելոց եկեղեցու զանգակատունը (1888 թ.) եկեղեցուց հազիվ 30 մ հյուսիս՝ շուրջ 5 մ ավելի բարձր հարթակի վրա (լուս.՝ ըստ ԺԹ դարավերջի և Ի դարասկզբի բացիկների)

Колокольня церкви Сурб Аракеоц (Св. Апостолов) города Карс находилась в 30 м к северу от церкви и была построена в 1888 г. на площадке высотой в 5 м (фот. по открыткам конца XIX в. и начала XX в.)




The belfry (1888) of Sourb Arakelots (Holy Apostles') Church of Kars standing hardly 30 metres north of it, on a platform about 5 metres higher than it (photos reprinted from postcards of the late 19th and early 20th centuries)



Կարսի Սբ. Առաքելոց եկեղեցին, որի զանգակատունն արդեն ավերված է (լուս.՝ Ժ.Մ. Թիերրիի, 1959 թ.), զանգակատան տեղը՝ ներփակված սպիտակ շրջափարսպի մեջ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2010 թ.)

Церковь Сурб Аракеоц (Св. Апостолов) города Карс с уже разрушенной колокольней (фот. Ж.-М. Тьерри, 1959 г.); обнесенное белой оградой место, где стояла колокольня (фот. С. Карапетяна, 2010 г.)

Sourb Arakelots (Holy Apostles') Church of Kars without its belfry, which has been destroyed (photo by J.-M. Thierry, 1959); the belfry site, enclosed within ramparts of white (photo by S. Karapetian, 2010)




Կարսի Ավագ կամ Սբ. Աստվածածինն մայր եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս. հեղ.՝ անհայտ, ԺԹ դարավերջ)

Հիմնավոր վերակառուցման է ենթարկվել ժե դարում և 1865-1866 թթ.:

Собор Аваг (Главный) или Сурб Аствацацин (Пресв. Богородицы) города Карс с юго-запада (автор фот. неизвестен, конец XIX в.) Собор был целиком перестроен в XVII в. и в 1865-1866 гг.

Sourb Astvatzatin (Holy Virgin) or Avag (Main) Church of Kars from the south-west (unknown photographer, late 19th century)

The church was thoroughly reconstructed in the 17th century, and in 1865 to 1866.



Չարսի Ավագ կամ Սբ. Աստվածածին մայր եկեղեցու մնացորդները (լուս. և չափ.՝ Ս. Կարապետյանի, 2006 թ.)

Остатки собора Аваг (Главный) или Сурб Аствацацин (Пресв. Богородицы) города Карс (фот. и обмер С. Карапетяна, 2006 г.)


The remnants of Sourb Astvatzatzin (Holy Virgin) or Avag (Main) Church of Kars (photos and measurement by S. Karapetian, 2006)



Բուլանք գյուղի եկեղեցու ավերակները հարավ-արևմուտքից (լուս.՝ Ջ. Բոլլի, 1976 թ. և Ս. Կարապետյանի, 2005 թ.), չափ.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ., եկեղեցու լուսամտի պատկեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.)

Руины церкви села Буланьк с юго-запада (фот. Дж. Болла, 1976 г., и С. Карапетяна, 2005 г.); обмер С. Карапетяна, 2005 г.; бровка окна церкви (фот. С. Карапетяна, 2005 г.)

The ruined church of Bulanek Village from the south-west (photos by J. Boll, 1976, and S. Karapetian, 2005); measurement by S. Karapetian, 2005; a window crown from the church (photo by S. Karapetian, 2005)



Եկեղեցու ավերակները գտնվում են Կարս քաղաքից 23 կմ արևելք՝ պատմական անունը մոռացության մատնված և ներկայումս Բուլանք անվանք հայտնի գյուղում: Կառուցվել է Է դարում: Ունի խաչաձև-գմբեթավոր եռախորան հորինվածք: Տևական անխնամ վիճակի հետևանքով շարունակաբար քայքայվում է և մաս առ մաս փլուզվելով՝ անհետանում:

Руины церкви находятся в селе Буланьк (историческое название предано забвению) в 23 км к востоку от города Карс. Построенная в VII в. трехапсидная крестово-купольная церковь находится в заброшенном состоянии и постепенно разрушается.

Bulanek Village (historical name consigned to oblivion), situated 23 km east of Kars City, retains a ruined church of the 7th century. A domed cruciform triconch, it is doomed to total neglect and is gradually being levelled to the ground.





Պայմանականորեն «Գմբեթ» կոչվող եկեղեցու մնացորդները գտնվում են Կարս քաղաքից շուրջ 5 կմ հարավ-արևմուտք: Կառուցվել է Ժ-ԺԱ դարերում և ունի խաչաձև գմբեթավոր քառախորան հորինվածք: Անտերության մատնված ճարտարապետական բացառիկ այս կառույցը տասնամյակներ շարունակ մերձաբնակների համար ծառայել է որպես պատրաստի շինանյութի աղբյուր: Արդյունքում գրեթե ամբողջությամբ հափշտակվել է երեսապատի քարերի մեծ մասը: Ոչնչացվել է նաև հյուսիսարևելյան խորշի մեջ գետեղված արծվաքանդակը, որը խորհրդանշում էր Հովհաննես ավետարանչին:


Руины церкви, которую условно называют «Гмбет» («Купол»), находятся примерно в 5 км к юго-западу от города Карс. Принадлежит к типу купольного тетраконха и датируется X-XI вв. В течение десятилетий чисто отесанные облицовочные камни этого уникального архитектурного сооружения служили готовым стройматериалом для жителей близлежащих сел. Было уничтожено также находящееся в северо-восточной нише интерьера церкви скульптурное изображение орла — символа евангелиста Иоанна.

A ruined church conventionally called Gmbet (Dome) is preserved about 5 km south-west of Kars City.

A monument of the 10th to 11th centuries, it represents a domed cruciform tetraconch.

Consigned to total neglect, this rare architectural monument has served as a “quarry” for the inhabitants of the neighbourhood for many decades, in the aftermath of which, it has been stripped of most of its finely-dressed revetment stones.


The church has also lost the eagle relief of its inner north-eastern niche symbolising John the Evangelist.



«Գմբեթ» եկեղեցին հյուսիսից, գմբեթատակ ծավալները և ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.), եկեղեցու հյուսիսարևելյան խորշը արծվաքանդակի ոչնչացումից առաջ (լուս.՝ Ժ.-Մ. Թիերրիի, 1982 թ.) և հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.), չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.

Руины церкви «Гмбет» с севера; подкупольное пространство церкви; вид интерьера церкви на восток (фот. С. Карапетяна, 2014 г.); северо-восточная ниша интерьера церкви со скульптурным изображением орла до (фот. Ж.-М. Тьерри, 1982 г.) и после его уничтожения (фот. С. Карапетяна, 2014 г.); обмер А. Акопяна, 2014 г.

The ruined church conventionally called Gmbet (Dome) from the north; its under-dome space; its interior to the east (photos by S. Karapetian, 2014); the inner north-eastern niche of the church before (photo by J.-M. Thierry, 1982) and after the annihilation of the eagle relief (photo by S. Karapetian, 2014); measurement by A. Hakopian, 2014






Ոչնչացված գերեզմանոցների մնացորդներ Մաղսուտջղղ և Խնձրիկ գյուղերում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Надгробия с разрушенных кладбищ сел Максуджик и Хндзрик (фот. С. Карапетяна, 2014 г.)

Remnants of annihilated cemeteries in Maghutjagh and Khendzrik Villages (photos by S. Karapetian, 2014)



Վիմափոր եկեղեցու հատակագիծն ու կտրվածքը դեպի հյուսիս (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.) և ներքին տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



План скальной церкви и разрез на север (обмер А. Акопяна, 2014 г.); вид интерьера церкви на запад (фот. С. Карапетяна, 2014 г.)

The plan of the rock-cut church and a section towards the north (measurement by A. Hakobian, 2014); the church interior towards the west (photo by S. Karapetian, 2014)

Վիմափոր եկեղեցին գտնվում է Կարս քաղաքից 14 կմ հարավ-արևելք՝ Մաղարաջղը (այժմ՝ Աթաքյոյ) և Բորլուկ գյուղերի միջնահատվածում՝ ձորի աջակողմյան ժայռերի մեջ:

Առնվազն Զ-Է դարերից լայն տարածում գտած խաչաձև գմբեթավոր քառախորան հորինվածքը ներկայացնող, սակայն վիմափոր տարրերակով սակավադեպ հանդիպող եկեղեցին, ըստ հարդարանքի խիստ ուշագրավ տարրերի, կարելի է թվագրել Թ-ժ դարերով:

Շնորհիվ վիմափոր և, ըստ այդմ, դժվարակործան հատկության՝ բավականաչափ կանգուն է, սակայն ակնհայտ է, որ որպես հայկական հուշարձան անտերության մատնված լինելով՝ հնամենի կառույցը մեծապես տուժել և ցարդ տուժում է գանձախուզության հետևանքով: Քանդել, ավերել են նույնիսկ եկեղեցու վիմակերտ հատակը:

Церковь находится в 14 км к юго-востоку от города Карс, между селами Магараджик (ныне — Атакёй) и Борлук, в скалах на правой стороне ущелья.

Имеет композицию крестово-купольного тетраконха, которая была широко распространена как минимум с VI-VII вв. (следует отметить, что подобные скальные церкви встречаются очень редко). Судя по примечательному убранству, ее можно датировать IX-X вв.

Благодаря своему расположению заброшенная церковь находится в хорошем состоянии, однако кладоискатели уже разрушили ее твердый пол.

The church is located amidst rocks rising on the right side of a gorge, in the area between Magharajegh (now: Atakyoy) and Borluk Villages, 14 km south-east of Kars City.

It represents a domed cruciform tetraconch, a composition that became especially wide-spread in Armenian architecture from at least the 6th to 7th centuries, but is rarely manifested among rock-cut monuments. The remarkable features of the church ornamentation trace it back to the period between the 9th and 10th centuries.

Thanks to its being rock-cut, the church has reached our days as standing although it is consigned to total neglect and has been seriously damaged by so-called gold-diggers, like any other Armenian monument throughout Western Armenia. Even the rock-cut floor of the church has not escaped deliberate destruction.





ՄԱՍՆԱԿԻ ԿԱՄ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՈՉՆՉԱՑԿԱԾ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
**ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՂԶՎԱՆ ԳԱՎԱՌԻ
ԿԱՂԶՎԱՆ ԳԱՎԱՌԱԿՈՒՄ**

ПОЛУРАЗРУШЕННЫЕ ИЛИ ПОЛНОСТЬЮ УНИЧТОЖЕННЫЕ
АРМЯНСКИЕ ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ
**НА ТЕРРИТОРИИ УЧАСТКА
КАГЫЗВАН, ОКРУГ КАГЫЗВАН
(КАГЫЗМАН), КАРССКАЯ ОБЛАСТЬ**

SEMI-RUINED OR TOTALLY ANNIHILATED
HISTORICAL ARMENIAN MONUMENTS IN
**KAGHZVAN SUB-DISTRICT,
KAGHZVAN DISTRICT,
KARS REGION**









Խաչավանքը հյուսիս-արևելքից և հարավ-արևելքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.), վանքի ավերակները հարավ-արևելքից (լուս.՝ Ժ.Կ. և Շ. Գոթելիենների, 2013 թ.), չափ.՝ Ա. Հակոբյանի, 2007 թ., միտումնավոր քերված խաչաքանդակ մզկիթի վերածված եկեղեցու հարավային ճակատին (լուս.՝ Ա. Կարապետյանի, 2007 թ.)

Монастырь Хачаванк с северо-востока и юго-востока (автор фот. неизвестен, 1900-е годы); руины монастыря с юго-востока (фот. Ж.-К. и Ш. Отеллье, 2013 г.); обмер А. Акопяна, 2007 г.; соскобленный крест хачкара, встроенного в южную стену церкви, превращенной в мечеть (фот. С. Карапетяна, 2007 г.)

